

«Հայաստան ծառատունկ ծրագիր» քարտեզործական Հիմնադրամը գերազանցեց ՄԱԿ-ի «Մեկ միլիարդ ծառ» քարոզարշավում իր պարտավորվածությունը՝ տնկելով ավելի քան 550,000 ծառ Հայաստանի 174 վայրերում

Երևան, 22 --- «Հայաստան ծառատունկ ծրագիր» / ՀԾԾ / (Armenia Tree Project) Համար այս տարին կարևոր նվաճումների տարի եղավ՝ Համայնքային ծառատունկի, անտառների լայնածավալ վերականգնման, տնկարանների ընդարձակման, Համայնքային ծառատունկի և լեռնային գյուղերի զարգացման ծրագրերի իրականացման առումով: 2007 թ. ՀԾԾ տնկեց 550,125 ծառ Հայաստանի 174 վայրերում՝ դրանով իսկ կատարելով իր պարտավորվածությունը ՄԱԿ-ի Բնապահպանական ծրագրի / ՄԱԲԾ / Համաշխարհային քարոզարշավում:

«Տնկե՛ք Հանուն մոլորակի. մեկ միլիարդ ծառի քարոզարշավ»-ի շրջանակներում ՀԾԾ պարտավորվել էր տնկել առնվազն 500,000 ծառ 2007 թ. ընթացքում, որպես ՄԱԲԾ-ի՝ մեկ տարում աշխարհում առնվազն մեկ միլիարդ ծառ տնկելու նպատակին ուղղված Հայաստանի ներդրման մի մաս:

2004 թ. ի վեր մինչև 2007 թ.-ը, Գյուղերի և լեռնային Համայնքների զարգացման / ԳԼՀԶ / ծրագրի շրջանակներում ՀԾԾ տնկել է 1,146,375 ծառ 555 հեկտար տարածություն և զբաղեցնող Հայաստանի հյուսիսային շրջանների անտառազուրկ վայրերում: Դրանք, մասնավորապես, Գեղարքունիքի մարզի Այգուտի, Չորավանքի, Դպրաբակի, ինչպես նաև Լոռու մարզի Ֆիզուտովոյի, Ալավերդու և Սպիտակի հողատարածքներն են: Որակյալ տնկիներ են ստացվել Միրաք ընտանիքի անվան անտառների վերականգնման նպատակով ստեղծված տնկարանից:

ՀԾԾ Համայնքային ծրագրերում ընդգրկված և դրանց կարևոր մաս դարձած Հայ բնակչությունը՝ Հիմնականում մասնակցում է ծառաբուծության, ծառատունկի և կրթական միջոցառումներին: Օրինակ, Գեղարքունիքի և Տավուշի հեռավոր գյուղերի բնակիչները ներկայում ընդգրկված են տնամերձ տնկարանների ծրագրում, որը մեծ մասսայականություն է վայելում և Հանդիսանում է կայուն եկամտի աղբյուր: Այգուտի և Աղավնավանքի ավելի քան 250 ընտանիք տնկարաններ են հիմնել իրենց տնամերձ տարացքներում, մասնավորապես, բակերում՝ վստահ լինելով, որ ի դեմս «Հայաստան ծառատունկ ծրագրի» ունեն հուսալի գործընկեր: Այդ բոլոր ընտանիքներն իրենց փոքր տնկարաններում որակյալ տնկիներ են աճեցնում, որի դիմաց ստանում են իրենց տարեկան եկամտի չափի մոտ կրկնակի վարձատրություն:

Հետևաբար տնկարանների նշված միկրո-նախագծային ծրագրից բացի, էլ ավելի շատ մարդ է մասնակցել անտառների վերականգնման գործընթացին և ծառատունկ իրականացրել Համայնքի անտառազուրկ լեռնալանջերին: Վեց գյուղի Հարյուրավոր բնակիչներ ներգրավվել են անտառների վերականգնման, սերմահավաքի և սերմնացանի աշխատանքներում: Բնակչությունն այժմ ապահովված է աշխատանքով և ապրուստի միջոցներով՝ և այս ամենը ոչ թե Հայաստանի թանկարժեք ծառատեսակների անխնա հատումից և վաճառքից, այլ ի շնորհիվ իրենց մասնակցության երկրի անտառների վերականգնման և պահպանման գործընթացին, ինչը գալիք սերունդների համար լուսավոր ապագայի երաշխիք է:

«Այս տարի մենք ընդարձակել ենք Այգուտի նախկին անտառապատման տարածքը՝ կանաչապատելով ևս 155 հա անտառազուրկ տարածք», նշեց Գյուղերի և լեռնային Համայնքների զարգացման ծրագրի ղեկավար Վադիմ Ուզունյանը: ՀԾԾ նախաձեռնությամբ կնքվեց նախադեպը չունեցող հինգ-կողմանի պայմանագիր՝ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի Հայաստանյան գրասենյակի, ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության, Գեղարքունիքի մարզպետարանի և Այգուտի տեղական ինքնակառավարման մարմինների միջև: Այս պայմանագիրը հիմք հանդիսացավ խոշոր անտառատնկման ծրագրի իրականացման համար: Ծրագիրն ուղղված է նպաստելու Համայնքային զարգացմանը՝ անտառների վերականգնման, աղքատության կրճատման և կոռուպցիայի դեմ պայքար

ծավալելու միջոցով: Ստորագրած պայմանագրի Համաձայն, այս տարի Այգուտ Համայնքի Ձիվիխլի տարացքում արդեն տնկվել է 374,600 տնկի:

Ավարտին մոտեցող 2007-ին ուշադրության արժանի նվաճումներից նաև եղել այն, որ կազմակերպությունը տեղի բնակչության ակտիվ մասնակցությամբ ստանձնեց նոր հուշարձան-անտառի ստեղծումը՝ նվիրված Թուրքիայի Ստամբուլ քաղաքում հունվարին վախճանված Հայ լրագրող Հրանտ Դինքի հիշատակին: Անտառն աճեցվել է Յելլի Համալսարանի Անտառատնտեսության ինստիտուտի և տեղի անտառապահների մասնագիտական աջակցությամբ և վերահսկողությամբ: Լոռու մարզի Ֆիոլետովո գյուղի տարացքում ստեղծված Հրանտ Դինքի անվան անտառի Հանդիսավոր բացումը նախատեսվում է 2008 թ.:

«Կազմակերպության նվիրատուների մեծահոգության շնորհիվ և արդյունքում մեզ Հաջողվեց վերականգնել էրոզիայի ենթարկված այս հողատարածքը, որը ապագայում կդառնա Հրանտ Դինքի հիշատակը Հավերժացնող կանաչապատ ու գեղեցիկ մի վայր: Այս կենդանի հուշարձանի ամեն մի տնկի, որ հողի մեջ է դրվել մեծ սիրով և հոգատարությամբ, կխորհրդանշի Հրանտ Դինքի կյանքն ու Հայրենանվեր գործունեությունը», նշեց ՀԾԾ փոխտնօրեն ՄՀեր Սադոյանը:

Անտառների վերականգման, անտառապատման և ծառաբուծության (տնկիների աճեցման) լայնածավալ նախաձեռնություններից բացի, Գեղարքունիքի և Լոռի մարզերի երեխաներն ու մեծերը 2007 թ. շարունակաբար մասնակցել են ՀԾԾ մասնագետների կողմից անցկացվող Հատուկ վերապատրաստման դասընթացին: ՀԾԾ Համագործակցությունը դպրոցների, Համայնքի ղեկավարների և զգաքնակչության Հետ ուղղված էր իր կողմից աճեցրած պտղատու այգիների խնամքի Համար պատասխանատվության զգացումը զարգացնելու: ՀԾԾ-ն կազմակերպեց նաև գյուղատնտեսությանն առնչվող մասնագիտացված վերապատրաստումներ՝ ֆերմերների, հողագործների և տնկարանատերերի Համար: Ի լրումն, Հայաստանի բոլոր մարզերից Հարյուրավոր ուսուցիչներ վերապատրաստում անցան «Միտք սերմանելը նույնն է, թե ծառ տնկես» խորագրի ներքո կազմակերպած դասընթացին՝ օգտագործելով բնապահպանության Հիմունքները յուրացնելու և կիրառելու նպատակով ՀԾԾ կողմից մշակված և ԵԱԿՀ Հայաստանյան գրասենյակի աջակցությամբ Հրատարակված ուսուցչական ձեռնարկը:

2007 թ. ՀԾԾ մեկ այլ՝ Համայնքային ծառատունկ ծրագրի շրջանակներում, Հայաստանի 170 Համայնքներում տնկվեց 73,500 ծառ: Ծրագրի դիտորդները պարբերաբար ստուգողական այցելություններ են կատարել տարբեր Համայնքներ և տեղում հսկել տնկված ծառերի աճն ու իրականացվող խնամքի որակը՝ սերտորեն Համագործակցելով տեղական մարմինների և բնակչության Հետ: Ծառատունկը սկսելուց առաջ, մասնագետները տնկման մեխանիզմների շուրջ Հատուկ բացատրական դասընթաց են կազմակերպել Համայնքների բնակիչների Համար: Հոգատար խնամքի և շարունակական հսկողության արդյունքում պահպանվել է ՀԾԾ Համայնքային վայրերում տնկած ծառերի 90 տոկոսը՝ չնայած կլիմայական խիստ պայմաններին և եղանակային տատանումներին:

«Մեր ծրագիրը կրկին արժանացել է բարձր գովասանքի՝ Հայաստանի տարբեր վայրերում իրականացված քրտնաջան աշխատանքի դիմաց: Ամեն տարի մենք ստանում ենք բազմաթիվ երախտագիտության նամակներ այն քաղաքների և գյուղերի ղեկավար մարմիններից, որտեղ կազմակերպությունը ծառատունկ է կազմակերպել», Հայտնեց Համայնքային ծառատունկ ծրագրի ղեկավար Անահիտ Ղարիբյանը: «Այս տարի բավականին մեծ էր պտղատու, ինչպես նաև դեկորատիվ ծառերի պահանջարկը: Մենք անում ենք ամեն ինչ, որպեսզի կատարենք մեզ Հետ Համագործակցելու ցանկությունն ու նեցող Համայնքների խնդրանքներն ու բավարարենք պահանջարքը: «Ծառատունկ ծրագրի» Կարին և Խաչպար գյուղերում գտնվող տնկարաններում աճեցրած տնկիներով են կանաչապատվել Հայաստանի շատ վայրեր. այդ ամենը արվել և արվելու է Հանուն նոր սերնդի ապահով և առողջ ապագայի», ավելացրեց տկն. Ղարիբյանը: